Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Ձորաղբյուրի Վ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Կերպարվեստ»առարկայի ուսուցչի (շաբաթական 8,5 դասաժամ), «Անգլերեն»առարկայի ուսուցչի ուսուցչի (շաբաթական 6 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն»առարկայի ուսուցչի (շաբաթական 5 դասաժամ), դասվարի (շաբաթական 11 դասաժամ) թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի օգոստոսի 08-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. օգոստոսի 26-ին՝ ժամը 12:00-ին**, Ձորաղբյուրի Վ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Ձորաղբյուր, Լուսավորության 20: Տեղեկությունների համար զանգահարել /099/-32-17-13 կամ /091/-17-16-02 հեռախոսահամարներով:

Դպրոցի տնօրենի ժ/պ՝ /Մ. Սարոյան/